



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ  
 ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԽՐԱԽՃԱՆՔԸ**

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, Շաբաթ, 22 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 8-ին, Ազգ. Առաջնորդարանի հովանիին ներքեւ գործող Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան ծխական եկեղեցիներու երիտասարդաց խմբակներու ամանորեան խրախճանքը տեղի ունեցաւ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ Հայց. Առաք. եկեղեցւոյ Երիտասարդական Միութեանց Վարիչ մարմինին:

Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի աշխատանքներուն ծիրին մէջ տեղի ունեցող այս ձեռնարկը կը վայելէր Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը: Ձեռնարկին ներկայ էին Հոգեւոր Հովիւներ եւ շուրջ 200 երիտասարդ-երիտասարդուհի:

Հաւաքական աղօթքէն ետք, Երիտասարդացի Կեդրոնական Վարիչ Մարմինի ատենապետը՝ իրաւաբան Րաֆֆի Նալճեան, բարի գալուստի խօսք արտասանեց եւ Թեմիս Երիտասարդացի գործունեութեան մասին ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց: Իսկ Ռիթա Տեօքմեճեան ներկայներուն Ծննդեան թուականի ու հայկական Ս. Ծնունդի մասին հակիրճ բացատրութիւններ տուաւ. ապա իրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ փոխանցեց իր օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները:

Յայտագիրի պաշտօնական բաժինէն ետք, երիտասարդները տօնական ուրախ գիշեր մը բոլորեցին:

**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՅԶԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ  
 ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԽՐԱԽՃԱՆՔԸ**

Թեմիս Կիրակնօրեայ վարժարաններու ուսուցչական կազմերը Շաբաթ, 29 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 7:30-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տօնեցին իրենց Ամանորեան եւ Ս. Ծննդեան խրախճանքը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Ներկայ էին Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչ Հայր Սուրբերը, Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներէն Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան, Ս. Խաչ Մայր Տաճարի Հոգեւոր Հովիւներէն Տ. Նարեկ Զինյ. Փեղիվանեան, Ս. Աստուածածին

Եկեղեցւոյ հոգաբարձական կազմի ներկայացուցիչներ, Կիրակնօրեայ Դպրոցներու Ճոճական Յանձնախումբի անդամներ եւ շուրջ 125 ուսուցիչ-ուսուցչուհիներ:

Հաւաքական աղօթքէն եւ Կիրակնօրեայ Դպրոցներու քայլերգի երգեցողութենէն ետք, զուարթ երեկոյեան յայտագիրը ձեռնհասօրէն վարեց Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին անուսով խօսք առաւ Վարիչ Մարմինի ատենապետ Տիար Յակոբ Զաղացպանեան. գնահատանքի ու սրտի խօսք արտասանեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Տիար Զարեհ Մարգարեան: Ուսուցիչ-ուսուցչուհիներու մասնակցութեամբ, Աստուածաշնչական հատուածներու ընթերցումներով եւ Յիսուս Մանուկի ծնունդը աւետող երգերու ու շարականներու, նաեւ արտասանութիւններու մատուցմամբ՝ գործադրուեցաւ պատշաճ յայտագիր:

Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, փակման խօսք արտասանեց եւ գնահատագիրներ յանձնեց կարգ մը վաստակաշատ ու արժանաւոր ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Զուարթ եւ մտերմիկ մթնոլորտի մէջ, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առթիւ կազմակերպուած ուսուցչաց խրախճանքը իր աւարտին հասաւ գիշերուան ժամը 11-ին:

## **ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԱՄԱՆՈՐԸ ԱՂՕԹՔՈՎ ՈՂՋՈՒՆԵՑԻՆ**

Ամանորը գեղեցիկ առիթ է ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ գիրար ողջունելու եւ բարեմաղթութիւններ ու նուէրներ փոխանակելու: Մայր մտնող տարուան վերջին օրերուն, դպրոցներէ, հաստատութիւններէ թէ գրասենեակներէ ներս, ամանորեան խրախճանքներ կը կազմակերպուին եւ կը փոխանակուին նուէրներ ու բարեմաղթութիւններ: Ազգականներ եւ հարազատներ, փոխադարձ այցելութիւններով թէ ճաշկերոյթներով, յաճախ ճոխ սեղաններու շուրջ բոլորուած՝ երգի ու նուագի ընկերակցութեամբ, զուարթ ժամեր կ'անցընեն եւ աւարտող տարուան հետ յոյսերով ու լաւատեսութեամբ առջցուն, անձկանօք կը սպասեն նոր ու նախորդ տարիներէ աւելի լաւ տարուան մը ոտնաձայներուն: Ամէն ոք կը հաւատայ որ սկսող նոր տարին պիտի բերէ մեծ բարիք, յաջողութիւն եւ օրհնութիւն:

Ամանորեան խրախճանական մթնոլորտ կը տիրէր նաեւ մեր թեմի կարգ մը եկեղեցիներու համալիրներէն ներս, ուր հոգաբարձական կազմեր եւ գործակից մարմիններ կազմակերպած էին ամանորեան ճաշկերոյթ տօնահանդէսներ: Եկեղեցիներու սրահներու ու համալիրներու մէջ, 2008 Նոր Տարին համախումբ եւ ժողովրդային խանդավառ մթնոլորտի մէջ դիմաւորելու համար, Էնսինոյի Ս. Նահատակաց, Կլէստէյի Ս. Աստուածածին եւ Օրէնճ Քաունթի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցիներու եւ դպրոցներու յարկին տակ կազմակերպուած ամանորի տօնակատարութեանց՝ աղօթքներով եւ ամանորեան բարեմաղթութիւններով իրենց մասնակցութիւնը բերին Թեմիս Բարեջան

Առաջնորդ՝ Բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Միաբան Հայրեր եւ ծխական շրջաններու Հոգեւոր Հովիւներ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ եւ Ազգ. Ֆերահեան վարժարանի Ուսումնական Մարմինին կազմակերպած ձեռնարկին, Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան՝ Կլէստէլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմակերպած ձեռնարկին, իսկ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան՝ Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգաբարձութեան կազմակերպած ամանորի ձեռնարկին:

Յուզիչ եւ տպաւորիչ էր պահը, երբ 2007 հին տարին կ'աւարտէր եւ 2008 նոր տարուան առաջին րոպէները խանդավառ ու խանդաղատալից ողջոյներով կը դիմակալուէին, եկեղեցիներու մէջ բացուող 2008 նոր տարուան համար աղօթքներ կատարուեցան ու եկեղեցական կարճ արարողութիւններ տեղի ունեցան: Առաջնորդ Սրբազան Հայրը աղօթասաց բարեմաղթութիւններով Նոր Տարին եւ իր հօտը դիմաւորեց, բարեաց պարգեւիչ Աստուծմէ շնորհաբեր Նոր Տարի խնդրեց, աշխարհիս խաղաղութիւն, բարի գործոց յաջողութիւն եւ առողջութիւն ցանկալով բոլորին:

## **ARMENIAN CHURCH YOUTH ASSOCIATION CHRISTMAS CELEBRATION**

On Saturday, December 22<sup>nd</sup>, members of the Armenian Church Youth Association which functions under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated the New Year and Christmas at "Karapetian" Hall of St. Garabed Church in Hollywood. Nearly 200 members attended the celebration which was organized by the ACYA Central Board.

The evening began with prayer led by clergy members, followed by welcoming remarks by Central Board Chair Mr. Raffi Najjian. Member Rita Deukmejian then gave a brief explanation of Christmas and why we celebrate on the 6<sup>th</sup> of January. The Prelate was then invited to convey his blessings and well wishes.

The official portion of the evening concluded with the Prelate's remarks, after which the celebration resumed.

## **NEW YEAR'S AND CHRISTMAS CELEBRATION OF SUNDAY SCHOOL TEACHERS**

On the evening of Saturday, December 29<sup>th</sup>, Prelacy Sunday School teachers from several parishes gathered at "Armenak Der Bedrossian" Hall to celebrate the New Year and Christmas. The gathering was held under the auspices of the H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate and saw the participation of Christian Education Department Directors, Pastors, Board of Trustees members, and 125 teachers.

Welcoming remarks were delivered by Chair of the Sunday School Directorate Mr. Hagop Tchagasspanian, followed by remarks by St. Mary's Board of Trustees Chair Mr. Zareh Markarian. The program consisted of the reading of passages from the Bible as well as the singing of Christmas carols and hymns by the teachers.

Closing remarks were made by Very Rev. Fr. Muron Aznikian on behalf of the Prelate who also presented certificates of appreciation to those teachers who were not in attendance at the Sunday School banquet on June 9<sup>th</sup>, 2007.

## **PRELACY PARISHES WELCOME THE NEW YEAR WITH PRAYER**

On Monday, December 31<sup>st</sup>, many of our parishes celebrated New Year's Eve, among them Holy Martyrs Church, St. Mary's Church, and Forty Martyrs Church. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended the banquet at "Avedissian" Hall of Holy Martyrs Church which was organized by Ferrahian School. Very Rev. Fr. Muron Aznikian attended the banquet at St. Mary's Church in Glendale, while Very Rev. Fr. Barthev Gulumian celebrated at Forty Martyrs Church in Orange County. At the stroke of midnight, the Prelate and Rev. Fathers welcomed the New Year with prayer by leading services inside the churches.